

ՔԱՐՈԶ

«Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ»:

(Ա Կորնթ. Է 24)

Ուղիղ վեց տարի առաջ, դեռևս քսան տարեկան մի երիտասարդ, սնված, մեծացած ու դաստիարակված այլ մթնոլորտում, դեռևս չճաշակած կյանքի բարին ու քաղցրը, որոնումների ճանապարհին կանչող ձայնով առաջնորդող մի լույսով ոտք դրեցի հոգևոր ճեմարանի նվիրական շեմից ներս: Անցնող տարիների ընթացքում այդ ձայնը և այդ լույսը փարատեցին խավարի մեջ խարխափող, մեգ ու մշուշի քողով պարուրված հոգուս և մտքիս վարագույրը, և իմ առջև վեր հառնեց մեր գոյության շուրջ 1700-ամյա բաբախող այն սիրտը՝ եկեղեցին հայոց, որն իր կենսունակ արյունատար երակների՝ Գրիգորների, Սահակ Պարթևների, Մեսրոպների, Նարեկացիների, Շնորհալիների ու Կոմիտասների շնորհիվ միշտ կենդանի է, միշտ բաբախուն և անշեջ:

Ու այս տեսիլքով ծնրադրած Սուրբ Էջմիածնի լուսո սուրբ սեղանի առաջ, ձեռնադրության սրբական խորհրդով շնորհընկալ դարձա հաղորդակից լինելու աստվածային սիրով և անսասան հավատքով առ լեցուն մեր սուրբ հայրերի հոգիներին: Արդարև այդ պահը Միածնաէջ սուրբ սեղանի առջև մեկ համար անխառն ուրախություն չէր միայն: Ցնծությունն ու բերկրանքը պարուրվել էր երկյուղի սարսուռով, երկյուղ, որը, սակայն, թերահավատության նշան չէր, այլ նոր կոչման ու պարտքի ծանրության գիտակցություն:

Մենք հանձնառուներս, որ պատրաստակամություն հայտնեցինք լծվելու մեր Տիրոջ մաճին և կրելու լուծը ծանր, ի նկատի չունեինք մեր երիտասարդական ուժն ու ավյունը, մեր կարողությունների ու հնարավորությունների ինքնավստահությունը, այլ մեր նախնյաց աներկբա հավատքով և վառ գիտակցությամբ ապավինել էինք Տիրոջը, որ Ինքն է լինելու մեր լծակիցը, որ Ինքն է ինքնավստահությունը, առաջնորդն ու շավիղը մեր ընթացքի: Ու համոզված էինք, որ հավատքը մեր սուրբ նախնյաց՝ լուծն այդ ծանր դարձնելու է քաղցր և բեռը՝ թեթև:

Մենք գիտենք, որ մեր կյանքի հառաջիկա օրերին ունենալու ենք պահեր Պետրոսյան ու Թովմասյան, վարանումի ու թերահավատության, սակայն համոզված ու հավատացած ենք, որ այդ պահերին մեր հոգուն հասնելու է Տիրոջ հուսատու և գոտեպնդող այն ձայնը, թե «Քաջալերեցարուք, ես եմ, մի երկնչիք»: Ահա քաջալերիչ, հուսադրող և հավատք ներշնչող այս ձայնն էր, որ, դառնալով իմ կյանքի ապավինությունն ու ինքնավստահությունը, համարձակություն տվեց կոչվելու համեստ մշակ ու սպասավոր՝ մեր գոյությունը ապահովող, մեր կենդանությունը հավերժացնող Հայոց Եկեղեցուն:

Մեր ժողովրդի ու ազգի պատմությանը քիչ թե շատ տեղյակ մարդիկ գիտեն դերն ու նշանակությունը մեր Եկեղեցու, արժեքն ու արժանիքը մեր սրբության, գիտեն, որ

մեր կյանքում շատ են եղել օրհասական, լինել-չլինելու պահեր, շատ են մղվել մեռնել-ապրելու կռիվներ, և ինչպես կասեր մեր մեծ մտածողներից մեկը՝ «Սուր էր թշնամու թուրը, ծանր էր թշնամու լուծը, սակայն սրագույն էր հայի գրիչը, տապալիչ էր նրա կենդանի խոսքը և ամուր էր նրա հավատքի Ոգին արյունածորան մարմնի մեջ»:

Նրանք գիտեն, որ մեր կյանքի անհույս ու մռայլ պահերին, վտանգների ու չարիքների ժամանակ մեր Եկեղեցին, ինչպես մայր արծիվ, իր թևերի ներքո է հավաքել իր ձագուկներին:

Խավարի և մթության մեջ ընկած ու մոլորված իր զավակներին, որպես փարոս, տուն է կանչել, որպես խաչ՝ առաջնորդ դարձել:

Փոթորիկների ու մրրկաշունչ ալիքների դիմաց միշտ եղել է խաղաղ ու ապահով նավահանգիստ:

Այսօր դուք և մենք, որ վկաներն ենք այս ճշմարտությունների, մեկ անգամ ևս հաստատում ենք, որ «Հայ ազգինն է Հայաստանյայց Եկեղեցին, և Հայաստանյայց Եկեղեցունն է հայ ազգը», ճիշտ այնպես, ինչպես սիրտն է կյանքը մարմնի, և մարմինը՝ կյանքը սրտի: Մեկը մյուսից անբաժանելի, մեկը մյուսին պայմանավորող: Իսկ մենք, որպես հոգևորականներ՝ ծառա ու սպասավոր մեր Տիրոջ և ազգի, մեր սրբազան պարտքն ենք համարում միշտ կենդանի ու անբասիր պահել ակունքն այս ճշմարտությունների:

Եվ արդ, հավատքի այս համոզումով, գիտակցական այս ըմբռնումով և սիրո այս նվիրումով աղոթենք և ուխտենք, որ երբեք չխցանվի արյան հոսքը կենսաբեր այն երակներում, որով սնվում է մեր Եկեղեցին, որ երբեք չտկարանա մեր սրտի զարկերակը՝ Հայոց Հայրապետությունը, որպեսզի միշտ կենդանի ու կենսաբաբախ լինի մեր սուրբ Եկեղեցին:

Ավարտելով խոսքս, իմ աղոթահայաց պաղատանքս եմ վերառաքում առ Աստված և հայցում, որ Իր հայրական օրհնություններով մեզ միշտ պահի սիրո, խաղաղության, հավատքի ու աստվածապաշտության մեջ:

Իմ խնդրանքն է նաև ձեզ, որ առ Աստված ուղղված ձեր աղոթքներում հիշեք և ինձ՝ նվաստիս, աղոթելով ինձ համար հայցեք Աստծուց, որ «Յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ»: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհքը և խաղաղությունը լինի ձեզ հետ և ամենքի: Ամեն:

ԵԶՐԱՍ ԱԲԵՂԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ